**Հայտարարություն**

**«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի Հովհաննես Օձնեցու անվան N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար:**

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. բարձրագույն կրթությունը,
3. ՈՒսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը
3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ)
5. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
6. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2021թ.հոկտեմբերի 13-ից մինչև նոյեմբերի 2-ը ներառյալ,** ամեն օր՝ժամը 9.00 ից 16.00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2021թ նոյեմբերի 16-ին՝ժամը 15.00-ին,** «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի Հովհաննես Օձնեցու անվան N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում: Տեղեկությունների համար զանգահարել 099 09-02-61 հեռախոսահամարով: